ՈՐՏԵՂ ԵՆՔ ՄԵՆՔ ՇԱՐԺՎՈՒՄ

Բացի Թբիլիսիի գլխամասային գրասենյակից, մենք ունենք երեք դաշտային գրասենյակներ Մցխեթայում, Գորիում և Զուգդիդիում, որտեղից սովորաբար սկսում ենք մեր պարեկությունը: Մեր դիտորդական մանդատն ընդգրկում է Վրաստանի ողջ տարածքը, սակայն Աբխազիայի և Հարավային Օսեթիայի դե-ֆակտո կառավարությունները դեռևս մերժում են մեզ մուտք գործել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները:

ԼՍՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ

Մեր դիտորդները միշտ ուրախ են զրուցել ձեզ հետ: Մեր դիտորդներին միշտ ուղեկցում են վրացախոս և ռուսախոս օգնականները:

Այցելեք մեզ:

www.eumm.eu

@ eummgeorgia

EUMM

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ

Մենք Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունն ենք: Ներկայացված ենք ավելի քան 200 անձն դիտորդով Եվրամիության (EU) տարբեր երկրներից: Մեզ հեշտությամբ կարող եք ճանաչել Եվրամիության ծածանվող դրոշներ ունեցող մեր կապույտ մեքենաներով և մեր կապույտ բաճկոններով:

Մենք Վրաստան ենք ժամանել 2008 թվականի հոկտեմբերի 1-ին՝ 2008 թվականի Վրաստանի ու Ռուսաստանի միջև տեղի ունեցած պատերազմից հետո անվտանգության իրավիճակը դիտարկելու նպատակով: Նշված օրվանից սկսած՝ մենք պարեկելով օր ու գիշեր, տարին 365 օր, որպեսզի դիտարկենք և միջազգային հանրությանը զեկուցենք ցանկացած իրադարձության վերաբերյալ:

Վերոնշյալը մենք անում ենք մեկ կոնկրետ նպատակով՝ նպաստելու երկարաժամկետ կայունությանը ինչպես Վրաստանում, այնպես էլ ողջ տարածաշրջանում:

ԻՆՉ ԵՆՔ

Մեր գործունեության նպատակն է նպաստել կայուն և անվտանգ միջավայրի ձևավորմանը ինչպես Վրաստանում, այնպես էլ ողջ տարածաշրջանում: Վերոնշյալն իրականացնում ենք մի քանի միջոց ձեռնադրելով.

1. Մեր դիտորդները մշտապես պարեկում են և հետևում առկա իրավիճակին: Սա թույլ չի տալիս որևէ կողմի, որպեսզի թշնամանք հրահրի: Նրանք գիտեն, որ մենք լինելու ենք այդպիսի իրադարձությունների ականատեսն ու զեկուցողը:

2. Մենք միջնորդում ենք պատերազմից առավել տուժած մարդկանց վերադարձը բնականոն կյանքի ռիթմին: Մենք անդրադառնում ենք մարդկանց իրավունքներին և կարիքներին, ինչպիսիք են ազատ տեղաշարժը և դրանց ազդեցությունը առողջության, կրթության, կենսաթոշակների, սեփականության և ջրի հասանելիության վրա: Հնարավորության դեպքում մենք տրամադրում ենք այս տեղեկատվությունը նրանց, ովքեր կարող են անհրաժեշտ օգնություն ցուցաբերել:

Մենք մարդասիրական կամ զարգացման օժանդակող կազմակերպություն չենք: Ուստի մենք ի վիճակի չենք ուղղակիորեն ցուցաբերենք աջակցություն կամ ֆինանսավորել կոնկրետ ծրագրեր:

3. Մենք տեղում ունենք մի քանի հարթակներ, որոնք ապահովում են շփման և տեղեկատվության փոխանակման առկայությունը հակամարտող կողմերի միջև: Սա խթանում է կանխարգելմանը և օգնում է նվազեցնել լարվածությունը:

4. Ի վերջո, մենք մեր դիտարկումների արդյունքներն ուղարկում ենք Եվրոպական միություն և նրա անդամ բոլոր երկրներ: Նրանք նշված տեղեկատվությունն օգտագործում են Վրաստանի և ամբողջ տարածաշրջանի նկատմամբ ավելի լավ քաղաքականություն մշակելու համար: